ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-19-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ԺՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. Անունը, ազգանունը՝

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2026թ. փետրվարի 17-ից 19-ը , Շվեյցարիայի Համադաշնություն, ք.Ժնև

4. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

ԵՏՀ ներքին տրանսպորտի կոմիտեի 88-րդ նստաշրջանի մասնակցություն

6. Քննարկված թեմաները.

Միջոցառման մասնակցության ընթացքում հնարավորություն է ընձեռնվել ներկա գտնվելու տրասնպորտի ոլորտի տարվա կարևորագույն միջոցառումներից մեկին, որի ժամանակ քննարկվել են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք ԵՏՀ Ցամաքային տրանսպորտի կոմիտեի 88-րդ նստաշրջանի բարձրաստիճան հանդիպման տրանսպորտի զարգացումն ու փոխգործունակությունը, անվտանգությունը և միջազգային համագործակցության դերը ՄՏԿ-ի և դրա ենթակա մարմինների միջոցով:

Նիստի ընթացքում քնարկվել են նաև «Driving Innovation for the Future of Inland Transport» նախարարական հռչակագրի նախագծի ընդունումը: Հիմնվելով Ներքին տրանսպորտի կոմիտեի (ՄՏԿ) և Բյուրոյի քննարկումների առաջարկությունների վրա,

քննարկման թեմաներից է եղել «Նորարարության խթանումը ներքին տրանսպորտի ապագայի համար»:

Բարձր մակարդակի հատվածում քննարկումները հիմնականում տեղի են ունեցել տրանսպորտային համակարգերի նորարարության,ավտոմատացման և արհեստական բանականության վերափոխող ազդեցության վրա ներքին տրանսպորտային համակարգերի թեմաների շուրջ:

"Connectivity, Mobility and Trade" հատվածի "Celebrating 70 Anniversary of CMR" խորագրով նախարարական պանելային քննարկման ժամանակ մասնակցել եմ քննարկումներին և հանդես եմ եկել ելույթով:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Հանդիպել եմ UNECE (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով) գործադիր քարտուղարի տեղակալ Դմիտրի Մարյասինի հետ, քնարկվել են ճանապարհային տրանսպորտին առնչվող օրակարգային կարևոր հարցեր:

Ներկայացրել եմ ՀՀ Կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

Կարևորել եմ TRIPP նախագծի իրականացումը, որպես նոր երթուղի, որը զգալիորեն կվերափոխի տարածաշրջանի տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքները՝ մեծացնելով Միջին միջանցքի թողունակությունը՝ երթուղիների լրացուցիչ ճյուղերի ձևավորման հաշվին, ինչը դրականորեն կանդրադառնա բեռների տեղափոխման արագության և ծավալների աճի վրա,ինչպես նաև կնվազեցնի դրանց փոխադրման ժամանակն ու ծախսերը:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը

24.02.2026թ.